

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵԶՐԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ (ԼԵԶՈՒԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՄԵԿՆԱԿԷՏ)

Համաշխարհային պատմութիւնը «հարուստ է» մարդկային հասարակութեան (ցեղի, տոհմի, ազգի, ժողովրդի) զանգուածային կոտորածներով, որոնք «հիմնաւորում են» ցեղային, ազգային, ժողովրդական կամ կրօնական յատկանիշներով: Այդպիսի բնաջնջումների «դասական» օրինակ տուել են քաղաքակիրթ եւրոպացիները, երբ քրիստոնէութեան քօղի տակ ոչնչացնում էին Ամերիկա մայրցամաքի տեղաբնիկներին (հնդկացիական ցեղերին):

Ժողովուրդների զանգուածային բնաջնջումները «նոր թափ» ստացան Ի. դարում. 1915-1923 հայերի կոտորածները Օսմանեան Թուրքիայում (չուրջ 1,5 միլիոն մարդ): Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից՝ հրեաների հոլոքոստը եւ գնչուների կոտորածները: 1975-1979 Կամբոջայում (չուրջ 3 միլիոն մարդ), 1987-1989 քղերի կոտորածները Իրաքում, 1994 Ռուանդայում (ութ հաւրիւր հազար մարդ թուխի ցեղից), 1995 Սրբբրենիցայում բոսնիական մահմեդականների կոտորածները բոսնիական սերբերի կողմից:

Զանգուածային սպանութիւնները դատապարտուել են միջազգային զինուորական ատեանների կանոնադրութիւններով, ՄԱԿի գլխաւոր ժողովի բանաձեւերով ու այդ յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժի մասին հռչակագրով:

Զանգուածային այդ բնաջնջումները միջազգային իրաւունքի համակարգում յայտնի են գեւնցիդ եզրոյթով, որ առաջին անգամ գործածութեան մէջ է մտցրել հրէական ծագումով լեհ իրաւաբան Ռաֆայէլ Լեմկինը (1943): Գեւնցիդ եզրոյթը միջազգային իրաւական կարգաւիճակ է ստացել Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ՝ 9 Դեկտեմբեր 1948, որ ուժի մէջ է

մտել 1951ի Յունուարի 12ից՝ ՄԱԿի հռչակագրում այն ձեւակերպուել է իբրեւ ծանրագոյն յանցագործութիւն մարդկութեան դէմ:

«Ես աստիճանաբար փորձում էի իմ հոգեկան աշխարհում զգալ այն բազմահազար զոհերի տառապանքները, որոնց թիւը գնալով մեծանում էր այն քանի համեմատ, երբ շարունակում էի ուսումնասիրել մարդկային պատմութիւնը: Ես հասկացայ, որ յիշողութիւնը կոչուած է ոչ միայն արձանագրելու անցեալի իրադարձութիւնները, այլև խթանելու եւ արթնացնելու մարդկութեան խիղճը: Անմիջապէս յաջորդեցին ժամանակակից ցեղասպանութեան օրինակներ, ինչպիսին են հայերի կոտորածները 1915ին: Ես հասկացայ, որ ազգերի բազմազանութիւնը, կրօնական խմբաւորումներն ու ցեղերը կարելոր նշանակութիւն ունեն քաղաքակրթութեան համար, որովհետեւ այդ խմբերից իւրաքանչիւրը կոչուած է կատարելու որոշակի առաքելութիւն եւ ներդրում ունենալու մշակութային ոլորտում: Ես որոշեցի դառնալ իրաւաբան եւ հասնել ցեղասպանութեան արգելմանը եւ կանխարգելմանը՝ տարբեր երկրների ջանքերը միաւորելու միջոցով», - գրել է Ռ. Լեմկինը:

Ռաֆայէլ Լեմկինը գեւոցիդը դիտարկել է ութ կարգի դրսեւորումների համատեքստում՝ քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրօնական եւ բարոյական: Դրանցից կարելոր են համարում, ըստ հեղինակի, երեք բնագաւառներ՝ կենսաբանական, ֆիզիկական եւ մշակութային:

Մշակութային ցեղասպանութիւնը մարդկանց որոշակի խմբի մշակութային, լեզուական եւ կրօնական յատկանիշների ոչնչացումն է: Ըստ այդմ, Ռ. Լեմկինը մշակութային գեւոցիդը առանձին չի դիտարկում նրա երկու դրսեւորումների համատեքստում: Չնայած այն բանին, որ ՄԱԿի հռչակագրի նախագիծը մշակուել էր անձամբ Լեմկինի մասնակցութեամբ, եւ նախագիծը ներառում էր նաեւ մշակութային բնագաւառը, այնուամենայնիւ հռչակագրի վերջնական տարբերակում այդ բաժինը դուրս մնաց ամբողջական տեքստից: Մշակութային գեւոցիդի նկատմամբ ուշադրութիւն հրաւիրեցին հիմնականում որոշ երկրների տեղաբնիկ ցեղերն ու արմատական բնակչութիւնը, որոնք ենթարկւում էին գաղութարար պետութիւնների յարձակման:

Հայ ժողովրդի արեւմտեան հատուածի գաղանային բնաջնջումը Օսմանեան Թուրքիայի կառավարութեան ծրագրաւորուած ու հետեւողական քաղաքականութեան առանցքն էր կազմում:

Ժամանակին աշխարհի առաջագիծ մարդկութիւնն արձագանքեց «Ժամանակակից պատմութեան մեծագոյն յանգագործութեանը» (Հ. Մորգենթաու), սակայն քանի դեռ չկար այդ «յանգագործութիւնը» բնութագրող եզրոյթ, աշխարհի լրատուամիջոցները այն ներկայացրին ամենատարբեր անուանումներով:

Միայն «Նիւ Եորք Թայմզ» թերթի 1915 թուականի համարներում գործածուել են հետեւեալ եզրարաւերն ու արտայայտութիւնները. «Քալան», «մեծ գաղթ», «մեծ տեղահանութիւն», «լիովին ապարնակեցում», «գանգուածային բռնագաղթ», «պարբերաբար արմատախիլ արուած», «տեղաբնիկներին լիովին արմատախիլ անել», «երիտասարդ կանանց եւ աղջիկներին թուրքերն առեւանգում եւ տանում են հարեմները», «նրանց հանդէպ բռնութիւններ են գործադրում կամ վաճառում են աւելի քարճր գնով», «երեխաների գանգուածային առեւանգում», «քարետես երիտասարդ աղջիկների առեւանգում», «աննախադէպ վայրագութիւններ», «սարսափելի արարքներ», «սպանութիւններ, բռնաբարութիւններ եւ այլ գազանութիւններ», «սարսափելի տանջանքներ», «նողկալի կտտանքներ», «կրծքերը հատած, եղունգները պոկած, ոտները կտրած կամ մեխեր խփած, ինչպէս ձիերին են պայտում», «ողջակիզում», «անօգնական կանանց եւ երեխաներին ողջ-ողջ այրում են», «կոտորածներ», «ջարդեր», «վայրագութիւններ», «անհատաւորի գազանութիւններ», «տղամարդկանց պարբերաբար սպանում են, իսկ կանանց եւ երեխաներին էջում են անպատկեր, որտեղ նրանք հազարներով սովամահ են լինում», «միլիոնաւոր սպանուած կամ տարագրուած հայեր», «1.500.000 հայ սովի է մատնուած», «մահանում են համակենտրոնացման քամբարներում», «գանգուածային կոտորածներ», «գանգուածային ջարդեր», «դժոխային կոտորածներ, որի նմանը այս երկիրը դեռ չի տեսել», «Օսմանեան կայսրութիւնից անհետացաւ մէկ եւ կէս միլիոն հայ», «քնաջնջման քաղաքականութիւն», «հայազգի քրիստոնեաներին ոչնչացնելու միջոցով քրիստոնէութիւնն արմատախիլ անելու քաղաքականութիւն», «ամբողջ հայ ժողովրդին ոչնչացնելու քաղաքականութիւն», «դիտաւորեալ քնաջնջումներ», «գործնականում ամբողջ ազգը ոչնչացուեց», «մի ամբողջ ժողովրդի քնաջնջում», «Քալանի, տեղահանութիւնների, գանգուածային մահապատիժների եւ կոտորածների կազմակերպուած համակարգ», «Քալան, սպանութիւններ, գանգուածային տեղահանութիւն ու ախոր եւ կոտորածներ», «հայերին իսպառ վերացնելու թուրքական իշխանութիւնների պարբերական, արտօնուած եւ կատաղի ջանքեր», «մի ամբողջ ազգի կանխամտածուած սպանութիւն», «պատերազմ՝ յանուն ոչնչացման», «ցեղի ոչնչացում», «մտադրութիւնը հայկական ցեղը վերացնելն էր», «Հայաստանն առանց հա-

յերի», «հայերին ոչնչացում է սպառնում», «Հայաստանի մահը», «հրաման տեղահանութեան եւ պատերազմի արդիւնքում բնաջնջման մասին», «Թուրքիայում բնակւող քոյր ոչ մահմեդական ազգութիւնների լիակատար ոչնչացման նպատակ», «յանցագործութիւններ Բաղափախրթութեան եւ քարոյականութեան հանդէպ»: (Եզրաբառերն ու արտայայտութիւնները քաղուած են կանադացի գրող, ցեղասպանագէտ, քաղաքական գիտութիւնների դոկտոր Ալան Ուայթհորնի «Հայոց ցեղասպանութեան համառօտ տեղեկատու» գրքից, որի հրատարակութիւնն սպասւում է մօտ ժամանակներս ԱՄՆ-ում):

Յակոբ Օշականն այն անուանել է դարի աղէտ, որ իրաւամբ ներառում է ինչպէս հայրենագրութիւնը, այնպէս էլ հոգեւոր-մշակութային արժէքների, պատմաճարտարապետական եւ կրօնա-եկեղեցական շինութիւնների ոչնչացումը:

Հայոց մեծ եղեռնից յետոյ, հարիւր տարի շարունակ, հայկական մշակութային աւանդոյթում, ինչպէս նաեւ այլաբեզու մշակութային համակարգերում անդրադարձ են կատարել հայ ժողովրդի մեծ ողբերգութեանը ամենատարբեր դիտանկիւններից՝ պատմական, պատմագիտական, բանասիրական, ազգային-ժողովրդական, մշակութաբանական, կրօնական եւ այլն:

Մեծ եղեռնի թեման, դժբախտաբար, այնքան տարողունակ է, որ հնարաւոր է այն քննել նորանոր հայեցակէտերով, ինչպիսի հնարաւորութիւն տալիս է ճանաչողական լեզուաբանութիւնը:

Ճանաչողական լեզուաբանութեան հիմքում ընկած է լեզուաբանական իմաստաբանութիւնը. որոշ հետազոտողներ լեզուի իմաստաբանական կարգերի մէջ տեսնում են առաւել ընդհանուր հասկացական կարգեր, որոնք կարելի է ներկայացնել որպէս մարդկային գիտակցութեան միջոցով արտաքին աշխարհի իւրացման արդիւնք:

Ընդհանրապէս ճանաչողական լեզուաբանութիւնն ընդգծում է այն դրոյթը, որ մարդու վարքագիծն ու գործունէութիւնը նշանակալի չափով որոշւում են նրա գիտելիքների մակարդակով, իսկ նրա լեզուական վարքականոնը՝ լեզուաիմացութեամբ:

Ճանաչողական լեզուաբանութեան առարկան լեզուն է, այժմ, սակայն, գիտնականները դրան վերաբերւում են այլ կերպ: Առանց լեզուին դիմելու անհնարին է հասկանալ մարդկային ճանաչողական այնպիսի ունակութիւնների էութիւնը, ինչպիսին են՝ ընկալումը, դատողութիւնը, ուսուցումը, ինչպէս նաեւ գիտելիքների ձեռքբերումն ու օգտագործումը:

Ճանաչողական լեզուաբանութեան զարգացման արդի փուլում գլխաւոր հիմնախնդիրներ են դիտուում հետեւեալ երեք հարցադրումները՝ լեզուական իմացութեան բնոյթը, նրա իւրացումը, նրա օգտագործման ձեւը: Ըստ այդմ, հետազօտութիւնները տարւում են հետեւեալ ուղղութիւններով. իմացութեան ձեւերի ու տեսակների բացայայտում, նշանների եւ օրէնքների ծագման ու զարգացման պայմանների վերհանում, լեզուական նշանների եւ մշակութային իրողութիւնների յարաբերակցութեան որոշարկում¹:

Ճանաչողական լեզուաբանութեան հիմնախնդիրների շրջանակը լրացնում են մի շարք հարցեր, որոնք կապուած են կախեալ յարաբերութիւնների եւ ճանաչողական շղթայում նրա բաղադրիչների բացայայտման հետ՝ իմացութիւն-լեզու-ներկայութիւն-տեղեկատուական հոսքի բազմափուլ գործընթացի անդամատում հասկացութիւնների՝ կարգայնացում – ընկալում²:

Այս գիտակարգը համակողմանիօրէն մշակել է նոր ուսմունքներ աշխարհի նկարագրի, հասկացութիւնների՝ լայն առումով եւ կարգայնացման վերաբերեալ, ինչպէս նաեւ ընդհանուր կողմնորոշուածութիւն է ցուցաբերում արտալեզուական գործօնների եւ աշխարհի վերաբերեալ մարդու գիտելիքների նկատմամբ³:

Ճանաչողական լեզուաբանութեան մեթոդաբանութիւնը վերլուծութեան եւ մեկնաբանութեան ելակէտ է համարում բառը, արտայայտութիւնը, կապակցութիւնը՝ լեզուական այդ միաւորների բովանդակային միջուկում տեսնելով նրանց ճանաչողական արժէքը: Այս մօտեցումը հնարաւորութիւն է տալիս այլալեզու մշակոյթներում փոփոխուած լեզուական միաւորների միջոցով հասնելու ընդհանրացման եւ, տուեալ դէպքում, ի. գարասկզբի «անանուն յանցագործութիւնը» (Ու. Չերչիլ) որակել գեղնցիկ-ցեղասպանութիւն եզրոյթով:

Հայոց մեծ եղեռնի բառապաշարի քննութեան մեկնակէտ պէտք է ընդունել Հ. Մորգենթաուի անդրադարձները հայոց ցեղասպանութեան վերաբերեալ: Մեծ հումանիստի բառապաշարում առանձնակի տեղ է գրաւում ցեղասպանութեանը վերաբերող

1 МАСЛОВА, В. А., *Современные направления в лингвистике*, Москва 2008, 100.

2 КРАВЧЕНКО А. В., ПОЛЯКОВ В., *Когнитивная парадигма в языкознании и новые вызовы // Когнитивное моделирование в лингвистике: сборник докладов* – Варна, Москва 2003.

3 КУБРЯКОВА, Е. С., *Части речи в когнитивной точки зрения*, Москва 1997.

բառաչերտը. Հ. Մորգենթաուն հայ ժողովրդին պատուհասած ահաւոր դժբախտութիւնը որակում է այնպիսի բառերով, որոնք համապատասխանում են յետագայում Ռ. Լեմկինի կողմից տրուած ցեղասպանութիւն եզրոյթին, ինչպէս, աղէտ, սպանդ, նախճիր, կոտորած, բնաջնջում եւ այլն: Այս բառերով է հայոց ցեղասպանութիւնը բնութագրուել անգլիալեզու գրականութեան մէջ: Հարց է ծագում. արդեօք այս բառերը կարո՞ղ են ներկայացնել երեւոյթի ամբողջական բովանդակութիւնը եւ դառնալ նրա ճանաչողական կողերը:

Դիմենք «Նոր քառգիրք Հայկազեան լեզուի» աշխատութեանը. նրա բացատրութիւնները տրուած են Հայոց մեծ եղեռնից շուրջ հարիւր տարի առաջ, եւ, ինչպէս կը տեսնենք ստորեւ, բառերն էլ են արտացոլում մեր ժողովրդի տխուր ճակատագիրը:

Աղէտ - 1. գորով, գութ, սրտացաւութիւն, 2. վիշտ, տառապանք, նեղութիւն, հոգեւոր անձկութիւն (տրտմութեամբ կամ ատելութեամբ), 3. ցաւալի անցք՝ դէպք, փորձանք, 4. սարսափելի չարիք, ոճիր (Ա., 39):

Բնաջինջ առնել՝ լինել - իսպառ՝ բոլորովին ջնջել՝ վերացնել՝ անհետացնել (Ա., 497):

Նդռն - չարիք, վտանգ, ոճիր, աղէտ, պատահար, վնաս (Ա., 654):

Կոտորած - բազմութեան սպանութիւն, սպանդ, ջարդ, սատակումն (Ա., 1117):

Նախճիր - 1. որսի ժամանակ կենդանիների սաստիկ կոտորած, 2. պատերազմի ժամանակ մարդկանց կոտորած, 3. ոճիր:

Ոճիր - 1. մեծ չարիք, 2. եղեռն, 3. յանցագործութիւն:

Սպանդ - (կրօն.) 1. զոհաբերուած կենդանիների սպանութիւն, 2. մորթոտում, 3. մորթուած զոհ:

Ինչպէս կարելի է ենթադրել այս բառերի իմաստային բացատրութիւնից, Հայկազեանի հեղինակները ժամանակակից լեզուաբաններից երկու հարիւր տարի առաջ կարողացել են գործադրել ճանաչողական լեզուաբանութեան սկզբունքները՝ բառիմաստները բացատրելու առումով: Եւ դա կատարել են, բնականաբար, առանց հաղորդակից լինելու լեզուաբանական այն տեսութիւններին, որոնք Եւրոպայում պէտք է ի յայտ գային երկու դար յետոյ միայն: Այնպէս որ ճանաչողական լեզուաբանութեան ակունքները պէտք է որոնել Միխիթարեան հայրերի գիտական ժառանգութեան ակունքներում, մասնաւորապէս նրանց բառարանագրական անձեռակերտ յուշարձաններում:

Հայ ժողովրդին պատած ողբերգությունը համամարդկային աղէտ է, եւ այն ըստ ամենայնի բնութագրելու համար պէտք է համեմատական խարիսխ նետել հրէական հոլոքոստի հետ: Թէեւ խորաշէլի պաշտօնական շրջանակների տեսակէտները հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բնաւ էլ հայանպաստ չեն, այնուամենայնիւ հրեայ ցեղասպանագէտները կարողանում են իրենք իրենց անուշով կոչել եւ դրա համարձակութիւնն ունեն:

Կան ժամանակակից պատմութեան զեղծարարներ (ինչպէս՝ Գիւնտեր Լիւին եւ Ռոնարդ Սիւնին), որոնք քողարկուած ձեւով պաշտպանում են թուրքական դիւանագիտութեան մերժողական քաղաքականութիւնը եւ բառերի ու արտայայտութիւնների հմուտ ու ձեռնածու «շարժումներով» թիւրիմացութեան մէջ են գցում ոչ միայն ընթերցողներին, այլեւ գիտական լայն շրջանակներին: Սակայն անուանի լեզուաբան Սեղա Գասպարեանը մերկացնում է հայ գիտնականների գաղափարական սնանկութիւնը եւ նրանց իսկ վկայած բառերի ու արտայայտութիւնների լեզուաճանաչողական վերլուծութիւններով ապացուցում նրանց հայեացքների հակահայ միտումները: Յաւալին այն է, որ Ռ. Սիւնին հայ յայտնի երգահան Գրիգոր Սիւնի Միրզաեանի թոռն է:

Խնդրոյ առարկան ժամանակակից անուանի պատմաբանների տեսանկիւնից այլ գնահատական է ստանում. պատմաբաններ, որոնք համաշխարհային ճանաչում ունեն: Հարցի կարեւորութիւնն ընդգծում է այն հանգամանքով, որ այդ կարգի մասնագէտները ոչ հայկական ծագում ունեն. խօսքը մասնաւորաբար վերաբերում է թուրք յայտնի մտաւորական թաներ Աքչամի տեսակէտներին, որոնք ամփոփուած են «Ամօքալի արարբ...» աշխատութեան սիւժետային առանցքում: Թուրք պատմաբանը կոչ է յղում թուրք հասարակութեանը եւ համայն մարդկութեանը՝ դատապարտելու երիտթուրքերի գործած յանցագործութիւնը, ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը եւ պատմութեան դատաստանի առաջ առերես քաւել իրենց մեղքը: Թուրք պատմաբանի կողմից ի. դարասկզբին հայութեան հանդէպ թուրքերի գործած ոճիրը ցեղասպանութիւն որակելու համարձակութիւնը արժանի է մեծագոյն գնահատանքի:

Դիտարկելով գեւոնցիդ-ցեղասպանութիւն բառապաշարի եզրոյթների համարժէքութեան հարցը՝ հնարաւոր է բացայայտել դրանցում ծածկագրուած կողերը, որոնք համամարդկային արժէք եւ նշանակութիւն ունեն եւ նպաստում են երեւոյթի ընկալման ժամանակակից ըմբռնումներին՝ անկախ լեզուական, մշակութային, ցեղային եւ կրօնական պատկերացումներից:

Պատմական այս տխուր շրջադարձությունից յետոյ անհրաժեշտ է ցույց տալ ցեղասպանություն եզրոյթի ծագումնաբանությունը, ստուգաբանական իմաստը, տարածուածությունը լեզուներում եւ հայերէն համարժէքը:

Ցեղասպանություն եզրոյթը փոխառություն է՝ որեւէ լեզուից, որովհետեւ որեւէ լեզուում այդպիսի բառ չկայ. նրա բաղադրիչները պատկանում են տարբեր լեզուների. հմմտ. յուն. γένος – ցեղ եւ լատ. caedere – սպանել, բառացի՝ «ցեղի ոչնչացում» սպանութիւն»: Յունարէն γένος բաղադրիչը հանդիպում է մի շարք փոխառություններում, ինչպէս՝ genealogia (տոհմաբանություն), genezis (ծնունդ), генетика (ծագումնաբանություն) եւ այլն: Հետաքրքիրն այն է, որ յուն. γένος փոխառությունը հայերէնի բարբառներում տուել է ջրնս ձեւը. հմմտ. «Սասնայ ծոեր» դիւցազնավէպում հանդիպող «ազնանց ջրնսից» կապակցությունը, որով բնութագրում են դիւցազնավէպի հերոսներին («աստուածների՝ դիւցազունների ցեղից կամ զարմից»):

Լատինարէն caedere բայահիմքից է caedes//caedis գոյականը՝ հետեւեալ իմաստներով՝ 1. սպանություն, կոտորած, 2. մեռեալ, դիակ, 3. սպանուածի արիւն: Հմմտ. patricida (pater+caedo) – հայրասպան:

Իբրեւ միջազգային իրաւունքի եզրոյթ, գեկոցիդը տարածուած է բազմաթիւ լեզուներում. հմմտ. ֆրանս. génocide, գերմ. Genozid, անգլ. genocide, իտալ. genocidio, իսպ. genocidio, բուլղ. геноцид, բելոռուս. геноцыд, ռուս. genocid, ռուս. геноцид եւ այլն:

Հայերէնում ստեղծուել է գեկոցիդ բառի համարժէքը՝ բաղադրիչների իմաստային պատճէման միջոցով. հմմտ. ցեղ+ա+սպանութիւն:

Մեզ ծանօթ լեզուներում գեկոցիդը բառակազմօրէն ամուլ բառ է. նրանով նոր կազմություններ արձանագրուած չկան, մինչդեռ հայերէն ցեղասպան հիմքով կան հետեւեալ բաղադրությունները, ինչպէս՝ ցեղասպանական, ցեղասպանօրէն, ցեղասպանություն եւ այլն:

2015 Ապրիլի 12ին, երբ կաթողիկ եկեղեցու հովուապետ Ֆրանցիսկոս Պապը Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում պատարագ մատուցեց Հայոց մեծ եղեռնի զոհերի յիշատակին եւ թուրքերի գործած վայրագությունները որակեց ցեղասպանութիւն եզրոյթով, աշխարհի շատ երկրների դիւանագիտական, մշակութային եւ քաղաքական բառապաշարում սրբագրումներ կատարուեցին: Նրանք, որ թէական վերաբերմունք ունէին Ի. դարի

առաջին մեծ ողբերգութեան նկատմամբ՝ այն բնութագրելով սպանդ, տեղահանութիւն, կոտորած, ողբերգութիւն, ողբերգական անցքեր եւ այլ եզրերով, հայոց մեծ ողբերգութիւնը որակեցին ցեղասպանութիւն եզրոյթով՝ դրանով իսկ միանալով աշխարհի առաջագէմ մարդկութեանը՝ մարդկութիւն, որ 100 տարի շարունակ փորձում էր բարձրացնել ցեղասպանութեան թանձր վարագոյրը՝ աշխարհին ցոյց տալու դանթէական իրական դժոխքի սահմուկեցուցիչ պատկերները...

Ահա եւ կատարուած շրջադարձային ձեւակերպումները. Անգլիայում «Բրիտանիկա» հանրագիտարանը նոր եզրոյթով վերաձեւակերպեց հայոց կոտորածները եւ Armenian massacre եզրաբառը փոխարինեց Armenian genocide բառակապակցութեամբ, Գերմանիայի Բունդեսթագը Ապրիլ 24ին հայոց մեծ ողբերգութիւնը ձեւակերպեց գեմցիդ եզրաբառով եւ այլն: Արար իրաւաբաններից մէկը Խ. դարի մեծ ողբերգութիւնն անուանեց Արմենոցիդ:

2015 Ապրիլի 22-23ը Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երեւանում Ցեղասպանութեանը նուիրուած միջազգային հաւաքի ժամանակ օտարերկրեայ պատուիրակները շեշտեցին, որ հայ քրիստոնեաների ցեղասպանութիւնն սկսուել է... 301 թուականից, երբ յանուն հաւատի եւ բարոյական արժէքների պահպանման հայ ժողովուրդը դարեր շարունակ ենթարկուել է այլադաւան պետութիւնների բռնազաւթումներին, կոտորածներին եւ տեղահանութիւններին... Այն որակեցին «բարոյականութեան եւ քանկականութեան հակաթեզ», «յանցագործութիւնների յանցագործութիւն» եւ այլ եզրոյթներով:

Մենք այն կարծիքին ենք, որ ցեղասպանութեան ութ բնագաւառներից մասնաւորապէս մշակութային ոլորտը ամբողջութեամբ չի ներառում այդ մարզում կատարուած այն բոլոր յանցագործութիւնները, որոնք ապրել է Հայաստանի արեւելեան հատուածի բնակչութիւնը: Եթէ ի մի ենք բերում հազարհինգ հարիւրամեայ հոգեւոր-մշակութային ժառանգութեան՝ աղէտի ենթարկուած հայեցակէտերը, ապա պարզ է դառնում մշակութային ցեղասպանութեան կամ մշակութային եղեռնի ողբերգական պարագիծը:

Ա) Որո՞նք են մշակութային եղեռնի վեկտորական ուղղութիւնները.

1. մտաւորականութեան ոչնչացում,
2. հոգեւոր-կրօնական ոլորտի սպասաւորների ջարդ,

3. գրաւոր-մշակութային արժէքների ոչնչացում,
 4. կրօնա-եկեղեցական շինութիւնների (վանքեր, տաճարներ, մատուռներ) պղծում եւ ոչնչացում,
 5. կրօնապաշտամունքային խորհրդանիշների՝ խաչքարերի ոչնչացում,
 6. դամբարանների, գերեզմանների պղծում եւ ոչնչացում, սրբապատկերների, ծիսակարգային թանկարժէք իրերի եւ առարկաների թալան ու իւրացում,
 7. հինաւուրց ձեռագրերի, մատեանների, մագաղաթների, կրօնական թղթերի, կոնդակների, հրովարտակաների հրկիզում եւ ոչնչացում,
 8. մշակութային օջախների գործունէութեան դադարեցում եւ ոչնչացում (թատրոններ, դպրոցներ, ուսումնական հաստատութիւններ),
 9. վանական համալիրների դրաղարանների, մատենադարանների հրկիզում եւ ոչնչացում:
- Բ) Որո՞նք են մշակութային եղեւնի շարունակական հետեւանքները.
10. քրիստոնէական դաւանանքի արտաքսում պատմական հայրենիքից,
 11. մայրենի լեզուի օտարում եւ արգելում ամբողջ թուրքիոյ տարածքում,
 12. ազգային պատկանելութեան քողարկում եւ ծպտեալ համակեցութիւն,
 13. մշակութային-լուսաւորչական գործունէութեան շարունակականութեան ընդհատում պատմական հայրենիքում եւ այլն:

Թուարկած կէտերից իւրաքանչիւրը բաւական է, որպէսզի մարդկութիւնը գաղափար կազմի մշակութային ցեղասպանութեան վերաբերեալ ընդհանրապէս, մինչդեռ հայ ժողովրդի արեւմտեան հատուածին պատուհասած հոգեւոր ցեղասպանութեան շրջանակներն այնքան ընդգրկուն եւ բազմազան են, որ դրանք չեն տեղաւորուում մշակութային ցեղասպանութիւն հասկացութեան շրջանակներում եւ նոյնիսկ աւելին են, քան մշակութային ցեղասպանութիւնը:

Ինչեւէ, ցեղասպանութիւնը ոճիր է, անկախ նրա բովանդակային տեսակէտերից, այն դատապարտելի արարք է, յանցագործութիւն՝ ուղղուած մարդկութեան դէմ. ցեղասպանութեան

դատապարտումը նպատակ ունի կանխելու այդ ոճիրի տարածումը, իսկ այն ժխտողների նկատմամբ քրեական պատասխանատվությունը միտուած է ժողովուրդների յիշողութեան մէջ յաւերժ պահելու անմեղ նահատակների յիշատակը:

Թերեւս քաղաքակրթութեան զարգացումը կարող է յանգեցնել այն բանին, որ բոլոր ժողովուրդների լեզուներում գեոնցիդ-ցեղասպանութիւն բառերը դառնան հնաբանութիւններ կամ պատմաբառեր:

Բառերը կարող են հնանալ, սակայն ժողովուրդների յիշողութիւնը՝ երբեք:

ԼԱԼԻԿ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Summary

TERMINOLOGICAL SYSTEM OF CULTURAL GENOCIDE
(LINGUISTIC-COGNITIVE POSITION)

LALIK KHACHATRYAN

International law qualifies mass extermination of humans as *genocide*, the term having been coined by Jewish lawyer Raphael Lemkin in 1943. Lemkin viewed *genocide* in the context of 8 types of manifestations: political, social, cultural, economic, biological, physical, religious and moral. Three of these, namely the biological, physical and cultural types, were considered by Lemkin as the most important.

Cultural genocide is the destruction of cultural, linguistic and religious characteristics of a certain group of people. Thus, Lemkin doesn't consider cultural genocide separately from the context of its two other manifestations.

The words used by Morgenthau to denote *genocide* should be regarded as a starting point for the Armenian Genocide terminological system. The great humanist qualified Armenians' horrific tragedy with the words that correspond to the term *genocide*: calamity, slaughter, massacre, destruction and so on. Actually, these are the words that are used in literature in English to characterize the Armenian Genocide. There arises a question: can these words represent the full content of the phenomenon and become its cognitive codes?

Cognitive linguistics gives the answer to this question.

This linguistic branch considers words, expressions and phrases as a starting point for analysis and interpretation and sees their cognitive value in the content nucleus of the above mentioned linguistic units. This method makes it possible to reveal the ciphered codes in the sound form of terms. These codes have universal value and significance and they foster the modern comprehension of the phenomenon, regardless of linguistic, cultural, ethnic and religious vision.

This approach enables to reach generalization through linguistic units common in cultures of different languages and to qualify "the nameless crime" (Winston Churchill) of the beginning of the 20th century with the term *genocide*.

We reckon that out of the 8 manifestations of genocide, the cultural one in particular doesn't totally encompass all the atrocities committed in that prov-

ince. The summary of the disasters that struck the Armenian nation's spiritual and cultural heritage clarify the tragic scope of the cultural genocide.

1. annihilation of intellectuals
2. extermination of representatives of the spiritual and religious sphere
3. elimination of written and cultural values
4. desecration and demolition of religious and ecclesiastical buildings (monasteries, temples, chapels)
5. destruction of khachkars (Armenian cross-stones) - religious symbols of worship
6. desecration and demolition of national tombs and cemeteries
7. looting and embezzlement of sacred images, icons, precious ceremonial items
8. arson and elimination of ancient manuscripts, books, parchments, papers with religious content, epistles, manifestos.
9. requisition and arson of the Bible
10. suspense of activities of cultural hearths and their destruction (theatres, schools, educational institutions)
11. arson and demolition of monastic libraries, manuscript repositories

What were the dangerous outcomes of the cultural genocide within the time and space frame?

12. banishment of Christian religion from the historic homeland
13. alienation and prohibition of mother tongue on historic territories
14. disguised national identity and community
15. termination of cultural and enlightenment activities in the historic homeland, etc.

When on 12 April 2015 Pope Francis served a Holy Mass in St. Peter's Basilica in memory of the victims of the Armenian Genocide and qualified the atrocities of Turks as *genocide*, changes were made in the dictionaries of political, social, diplomatic institutions of the world. Encyclopedia Britannica, having edited the article on the Armenian Genocide, replaced "Armenian Massacre" with the term "Armenian Genocide". Similarly, on 24 April the German Bundestag formulated the great Armenian tragedy as "genocide", while an Arab lawyer named it "Armenocide".

The development of civilization may lead to the word "genocide" becoming an archaic or historical term; however, it will never be erased from peoples' memory.